

ԳԱՆՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

# ԿԱՆՏԵՂ

ՍՔ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ  
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ




**GANTEGH** BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTREAL ՄԱՅՐ ՏԱՆԱՐ

ԿԻՐԱԿԻ 12 Ապրիլ 2020

158

DIMANCHE, 12 Avril 2020



Քրիստոս Յարեալ Ի Մեռելոց  
Օրհնեալ Է Յարուրթիւնն Քրիստոսի

**ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿ**  
**PÂQUES**

**Աստուածաշունչի Ընթերցումներ**  
**ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ**

1.15-26

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ**  
**ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ**

16. 2-8

**Les lectures de la Bible d'aujourd'hui :**

ACTES 1.15-26

MARC 16.1-8

Պատարագիչ՝

**ԳԵՐՇ. Տ. ԱԲԳԱՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ**

**Առաջնորդ Գանատահայոց Թեմի**

Célébrant:

**S.E. ABGAR HOVAKIMYAN**

**Primat de Diocèse Armenienne du Canada**

**Առաւօտեան Ժամերգութիւն 9:30-ին**

**Office Matines à 9 :30**

**Ս. Պատարագ Ժամը 10:30-ին**

**La Sainte Messe à 10:30**

Deacons - Acolytes

# ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

**LES LECTURES  
DE DIMANCHE**



**THE SUNDAY  
READINGS**

## ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

**1.15-26**

Այն օրերը Պետրոս ելաւ աշակերտներուն մէջ, (ուր հարիւր քսան հոգիի չափ հաւաքուած բազմութիւն կար,) ու ըսաւ. «Մարդի կ'եղբայրներ, պէտք է որ կատարուէր այն գրուածը, որ նախապէս Սուրբ Հոգին Դաւիթին բերնով ըսաւ Յուդայի համար, որ Յիսուսը բռնողներուն առաջնորդ եղաւ. Վասն զի անիկա մեզի հետ էր մեր համրանքին մէջ եւ այս պաշտօնէն ալ բաժին ունէր: Ասիկա անիրաւութեան վարձքով ազարակ մը ստացաւ ու զլիսիվայր իյնալով մէջտեղէն ճեղքուեցաւ եւ իր փորտոյիքը դուրս թափուեցաւ: Ու այս բանը Երուսաղէմ բնակողներուն յայտնի եղաւ, այնպէս որ իրենց լեզուովը այն ազարակին անունը Ակեղդամա դրուեցաւ, այսինքն՝ Արեան Ագարակ: Վասն զի Սաղմոսներու մէջ գրուած է թէ՛ 'Անոր բնակարանը աւերակ ըլլայ ու անոր մէջ բնակող մը չըլլայ: Անոր պաշտօնը ուրիշը առնէ': Ուրեմն պէտք է որ այս մարդոցմէն՝ որոնք մեզի հետ էին այն բոլոր ատենը, երբ Տէր Յիսուս մեր մէջ մտաւ ու ելաւ՝ Յովհաննէսին մկրտութենէն սկը-սած՝ մինչեւ այն օրը որ մեզմէ համբարձաւ՝ ասանցմէ մէկը մեզի հետ վկայ ըլլայ անոր յարութեանը»: Երկու հոգի կայնեցուցին Յովսէփը, որ Բարսաբա կը կոչուէր, որ Յուստոս ալ մակնանուանուեցաւ ու Մատաթիան: Աղօթելով՝ ըսին. «Դո՛ւն, ո՛վ Տէր, որ ամենուն սիրտը կը ճանչնաս, այս երկուքէն ո՞ր մէկը ընտրեցիր, մեզի յայտնէ. Որպէս զի այս պաշտօնին եւ առաքելութեանը վիճակը առնէ, որմէ Յուդա ինկաւ իր տեղը երթալու»: Անոնց համար վիճակ ձգեցին ու վիճակը Մատաթիային ելաւ: Անիկա տասնըմէկ առաքեալներուն հետ սեպուեցաւ:

## ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

**16. 2-8**

Կիրակի առտուն շատ կանուխ, երբ արեւը կը ծագէր, գացին գերեզմանը Ու իրարու կ'ըսէին. «Քարը ո՞վ պիտի գորէ մեզի գերեզմանին դռնէն», Ու նայեցան տեսան որ քարը զլորուած էր, վասն

զի շատ մեծ էր: Գերեզմանէն ներս մտնելով՝ երիտասարդ մը տեսան, որ աջ կողմը նստեր էր ճերմակ պատմուճան հագած ու զարհուրեցան: Անիկա ըսաւ անոնց. «Մի՛ զարհուրի՞ք, Յիսուս Նազովրեցին կը փնտռէք, որ խաչուեցաւ: Անիկա յարութիւն առաւ, հոս չէ: Ահա այն տեղը ուր դրին զանիկա: Ուրեմն գացէ՛ք, ըսէ՛ք անոր աշակերտներուն եւ Պետրոսին, թէ ահա ձեզմէ առաջ Գալիլիա կ'երթայ. հոն պիտի տեսնէք զանիկա՝ ինչպէս ձեզի ըսաւ»: Կիները դողով ու սպշութեամբ բռնուած՝ ելան ու փախան գերեզմանէն եւ մարդու բան չըսին, քանզի կը վախնային:

### **ACTES 1.15-26**

Et en ces jours-là Pierre se leva au milieu des Disciples, qui étaient là assemblés au nombre d'environ six-vingts personnes, et il leur dit : Hommes frères! il fallait que fût accompli ce qui a été écrit, [et] que le Saint-Esprit a prédit par la bouche de David touchant Judas, qui a été le guide de ceux qui ont pris Jésus. Car il était de notre corps, et il avait reçu sa part de ce ministère. Mais s'étant acquis un champ avec le salaire injuste qui lui avait été donné, et s'étant précipité, son corps s'est crevé par le milieu, et toutes ses entrailles ont été répandues. Ce qui a été connu de tous les habitants de Jérusalem; tellement que ce champ-là a été appelé en leur propre Langue, Haceldama, c'est-à-dire, le champ du sang. Car il est écrit au Livre des Psaumes : que sa demeure soit déserte, et qu'il n'y ait personne qui y habite. Et, qu'un autre prenne son emploi.

Il faut donc que d'entre ces hommes qui se sont assemblés avec nous pendant tout le temps que le Seigneur Jésus a vécu entre nous, En commençant depuis le Baptême de Jean, jusqu'au jour qu'il a été enlevé d'avec nous, quelqu'un d'entre eux soit témoin avec nous de sa résurrection. Et ils en présentèrent deux, [savoir] Joseph, appelé Barsabas, qui était surnommé Juste ; et Matthias. Et en priant ils dirent : toi, Seigneur, qui connais les cœurs de tous, montre lequel de ces deux tu as élu; Afin qu'il prenne [sa] part de ce ministère et de cet Apostolat, que Judas a abandonné, pour s'en aller en son lieu. Puis ils les tirèrent au sort; et le sort tomba sur Matthias, qui d'une commune voix fut mis au rang des onze Apôtres.

### **MARC 16.1-8**

Or le [jour du] Sabbat étant passé, Marie-Magdeleine, et Marie [mère] de Jacques, et Salomé achetèrent des aromates, pour le venir

embaumer. Et de fort grand matin, le premier jour de la semaine, elles arrivèrent au sépulcre, le soleil étant levé. Et elles disaient entre elles : qui nous roulera la pierre de l'entrée du sépulcre? Et ayant regardé, elles virent que la pierre était roulée; car elle était fort grande. Puis étant entrées dans le sépulcre, elles virent un jeune homme assis à main droite, vêtu d'une robe blanche, et elles s'épouvantèrent. Mais il leur dit : ne vous épouvantez point; vous cherchez Jésus le Nazarien qui a été crucifié; il est ressuscité, il n'est point ici; voici le lieu où on l'avait mis. Mais allez, et dites à ses Disciples, et à Pierre, qu'il s'en va devant vous en Galilée; vous le verrez là, comme il vous l'a dit. Elles partirent aussitôt et s'enfuirent du sépulcre : car le tremblement et la frayeur les avaient saisies, et elles ne dirent rien à personne, car elles avaient peur.

**ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԱՑՈՅՑ ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲՈՒԻԱՆ**

**Ապրիլ – Avril**

**13, Երկուշաբթի – Բ. Չատկի ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ  
Հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոցն  
արաւօտեան ժամը 11:00**

**Lundi 13 – 2ème jour de Pâques**

**Commémoration des défunts à 11h00**

**14, Երեքշաբթի – Գ. Չատկի**

**Mardi 14 – 3ème jour de Pâques**

**15, Չորեքշաբթի – Դ. Չատկի**

**Mercredi 15 - 4ème jour de Pâques**

**16, Հինգշաբթի – Ե. Չատկի**

**Jeudi 25 – 5ème jour de Pâques**

**17, Ուրբաթ - Չ. Չատկի**

**Vendredi 26 – 6ème jour de Pâques**

**18, Շաբաթ- Է. Չատկի**

**Յիշատակ գլխատման Արքոյն Յովհաննու Մկրտչին**

**Samedi 18 – 7ème jour de Pâques**

**Commémoration de la décollation de St. Jean- Batiste**



## ԿԱՐԵԻՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Արդեօք Գիտե՞լի՞ք թե՛.-

- Ի՞նչ անհրաժեշտ է Ս. Հաղորդություն ստանալու համար:

Տիրոջ Մարմինն ու Արինը ճաշակելու համար պետք է՝

- **Ըլլալ մկրտուած**, այսինքն՝ քրիստոնեայ եւ Եկեղեցու անդամ,
- **Ունենալ ուղղափառ հաւատք**, այսինքն՝ հաւատալ եւ այն համոզումը ունենալ, որ կը ճաշակենք ոչ թէ պարզ հաց եւ գինի, այլ Տիրոջ իրական Մարմինն ու Արինը,
- Ս. Հաղորդութենէն առաջ **գոջալ** գործած մեղքերուն համար, **ապաշխարել**, **խոստովանիլ** եւ **թողութիւն ստանալ**, այսինքն՝ միայն ինքնաքննութեամբ, հոգեւոր եւ ֆիզիքական մաքրութեամբ մօտենալ Ս. հաղորդութեան,
- Հաղորդուելու օրը կամ նախորդ օրուան երեկոյէն **պահք** պահել, Ս. Գիրք ընթերցել, աղօթել, լոզնալ եւ բան մը չուտել:

- Ի՞նչ է Ս. Հաղորդութեան Խորհուրդին ձեւը:

Խորհուրդին հաստատման ժամանակ Յիսուսի արտաբերած խօսքերն են. Հացին համար՝ «Առէ՛ք, կերէ՛ք, այս է Իմ Մարմինս...», գինի պարագային՝ «Խմեցէ՛ք անկէ բոլորք, որովհետեւ այս է Նոր Ուխտի Իմ Արինս...»:



## ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

### ԱՂՕԹՔ ՅԱՆՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ

Քու խաղաղութիւնովդ,  
ով Քրիստոս Փրկիչ մեր,  
որ մտքէ ու իւելքէ շատ վեր է,  
ամուր եւ անվախ պահէ զմեզ ամէն չարութենէ.  
հաւասարէ զմեզ քու ճշմարիտ երկր պագուներուդ հետ,  
որք հոգւով եւ ճշմարտութեամբ  
քեզ երկրպագութիւն կ'ընեն.  
Վասն զի Ամենասուրբ երրորդութեանդ  
կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ.  
այժմ եւ միշտ, յաւիտեանէ մինչեւ յաւիտեան.  
Ամէն:

### PRIÈRE POUR LA PAIX

Christ, notre Sauveur,  
dans ta paix qui dépasse toutes pensées et paroles,  
fortifie-nous et garde-nous sans peur devant tout mal;  
mets-nous aurang de tes vrais adorateurs,  
qui t'adorent en esprit et en vérité,  
car à la très Sainte Trinité  
conviennent la gloire, la souveraineté et l'honneur,  
maintenant et toujours et pour l'éternité de l'éternité.  
Béni soit notre Seigneur, Jésus-Christ.  
Amen.

# ՆՈՒԻՐԱՏՈՒՌՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

**DON  
À L'ÉGLISE**



**DONATION  
FOR THE CHURCH**

## CHURCH:

**IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:**

**THE LATE ZAVEN TCHAYLAKIAN:**

Mrs. Sonia Kalpakdjian \$200.

**HOKEHANKISD:**

**THE LATE DR. ARMEN PARUNAK**

Mr. Ari Bagdasaryan \$100.

**EASTER MERELOTZ:**

**THE LATE ECITYAN FAMILY:**

Mr. & Mrs. Mihran & Yercanik Ecityan \$50.

**THE LATE AROYAN, MAGHAKIAN,**

**& KESHISHIAN FAMILIES**

Miss Shoushan Aroyan \$50.

**YOUGHAKIN EASTER:**

Dr. & Mrs. Nurhan & Ani Ecityan, Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian,

Mr. & Mrs. Nerses & Rachel Doramajian, Dr. Vilma Derbekyan \$200,

Mr. & Mrs. Hovsep & Mary Doramajian, Mrs. Pergruhi Meremetci \$100,

Mrs. Irma Basmajian, Miss Shoushan Aroyan \$50,

Mr. Stephan Mouradian \$60,

Mr. & Mrs. Mihran & Yercanik Ecityan \$35.

## ՇԱԲՈՒՍԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԹԻՒՆԸ

Տիրոջ Ս. Յարութեան Հրաշագեղ այս տօնին օրը անկաշկանդ եւ համարձակ ըլլանք բոլոր ազգերու եւ կրօնապաշտ մարդոց մօտ վկայելու, թէ ինչպէս դարեր առաջ Քրիստոսի Սուրբ մարմինը Յարութիւն առաւ մեռելներէն:

Յարութիւն անունը կրող մարդոց անուանակոչութեան օրը շնորհատրելով, կ'ուզեմ միշտ յիշէք Ձեր անուան ծագումին մասին, յիշեցէք եւ գիտակցեցէք բխող զօրութեան մասին...եղէք եւ մնացէք Տիրոջ բարի գործերուն տարածողները...

Շնորհատր Անուանակոչութիւն



# ՏՕՆԵՐ

10 Ապրիլ 2020

## ԱԻԱԳ ՈՒՐԲԱԹ

Ասագ Ուրբաթը կը խորհրդանշէ արարչագործութեան վեցերորդ օրը, երբ Աստուած հողէն արարեց Ադամին Իր պատկերով ու նմանութեամբ, իսկ յետոյ անոր կողէն ստեղծեց Եւային եւ անոնց որաւ Դրախտին մէջ: Ուրբաթ օրը Ադամն ու Եւան կերան արգիլուած պտուղը, մերկա-ցան փառքէն, եւ Տէրը անէծքով պատժելով մարդուն՝ արտաքսեց Դրախտէն:

Վեցերորդ ժամանակաշրջանին Աստուած Ս. Կոյսի անարատ արգանդին մէջ դարձաւ կատարեալ Մարդ՝ հոգիով, մտքով ու մարմնով, որպէսզի կատարէ տնօրինական գործերը: Ասագ Ուրբաթ օրը Տէրը Յուդայի մատնութեամբ ձերբակալուեցաւ, ծէծի ու ծաղրի ենթարկուելով եւ ապա, Իր վրայ վերցնելով Ադամի անէծքն ու դատապարտութիւնը, իսպի վրայ մեռնելով, բացաւ Իր կողը, եւ կողէն բխած ջուրով լուաց մարդուն մեղքերը, իսկ բխած արեամբ մեզ գնեց չարի ծառայութենէն (Մատթ. ԻԶ 47-ԻԷ 56): Եւ ինչպէս Ադամի կողէն ստեղծուեցաւ անոր կիներ՝ Եւան, այդպէս ալ Տիրոջ կողէն եղաւ Անոր հարսը՝ Եկեղեցին: Այսօր թէպէտ ուրախութիւն է հոգիներու համար, քանի որ Քրիստոսի չարչարանքներով մեր հոգիները ազատուեցան դժոխքէն, սակայն մարմնապէս սուգ է ու տրտմութիւն:

Ասագ Ուրբաթը Յիսուս Քրիստոսի չարչարանքներուն, խաչելութեան, մահուան ու թաղման յիշատակութեան օրն է: Այդ օրը տեղի կ'ունենայ Խաչելութեան կարգ: Երեկոյեան ժամերգութենէն յետոյ նախատօնակի արարողութեան ընթացքին կը կատարուի Թաղման Կարգը, երբ Յիսուս Քրիստոսի խորհրդանշական գերեզմանը՝ պատրաստուած ծաղիկներէ եւ ծաղի ճիւղերէ, կը պտտցուի եկեղեցւոյ շուրջ՝ ի տես հաւատաւոր ժողովուրդին:



11 Ապրիլ 2020

**ԱԻԱԳ ՇԱԲԱԹ  
ՃՐԱԳԱԼՈՅՑ Ա.  
ԶԱՏԿՈՒԱՅ**



Աւագ Շաբաթ օրը ընդհանուր պատկերը եւ օրինակն է արարչագործութեան եօթներորդ օրուան, երբ

Աստուած՝ Արարիչը հանգստացաւ Իր բոլոր գործերէն:

Աստուած վեց օրուան մէջ արարեց, ստեղծեց ժամանակաւոր եւ ապականութեան ենթակայ աշխարհը, իսկ եօթներորդ օրը սուրբերու հանգիստը:

Անցած օրերը Աստուած պատուեց արարչագործութեամբ, ըստեղծագործութեամբ, իսկ այս օրը՝ Շաբաթը՝ օրհնութեամբ եւ սրբութեամբ:

Արդարեւ, վեցերորդ ժամանակաշրջանին՝ Փրկիչը եկաւ, մարմնացաւ եւ մարդացաւ կամաւորապէս չարչարուելու: Այս մեծախորհուրդ Շաբաթ օրը կը յիշատակուին Տիրոջ թաղումը եւ հանգիստը գերեզմանի մէջ. (ՄԱՏԹ. ԻԷ 57-61): Այս Շաբաթ օրը, Յիսուս, մարդոց հոգիներու չարչարանքներու վայրը՝ դժոխքը աւերեց, եւ բացաւ հանգիստի վայրը՝ Դրախտի դռները:

Իսկ եօթներորդ ժամանակաշրջանը երբ հասնի, անմիջապէս Տէրը կրկին պիտի գայ եւ արդարներուն պիտի շնորհէ, աշխարհի սկիզբին անոնց համար պատրաստուած Արքայութիւնը՝ յաւիտենական կեանքը եւ յաւիտենական հանգիստը:

Թէեւ Յիսուս Քրիստոսի թաղման յիշատակի օրը Աւագ Շաբաթ օրն է, եւ սակայն թաղման գլխաւոր արարողակարգը կը կատարուի Աւագ Ուրբաթ օր երեկոյեան, քանի որ երեկոյեան, օրն արդէն փոխուած է Շաբաթ օրուան:

Իսկ Աւագ Շաբաթ օրը, նոյն օրուան երեկոյեան կը կատարուի Սուրբ Զատկուայ Ճրագալոյցի արարողութիւնը՝ այսպիսով եզրափակելով Տիրոջ «չարչարանքներու շաբաթը» Աւագ շաբաթը, եւ աւետելով Անոր Յարութիւնը մեռելներէն...:

Կիրակի, 12 Ապրիլ 2020

## Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆ

Յիսուս Քրիստոսի հրաշափառ Յարութեան տօնը կը կոչուի նաեւ՝ Զատիկ, որ կը նշանակէ զատում, բաժանում, հեռացում մեղքերէն եւ վերադարձ առ Աստուած: Զատիկը Հայ Առաքելական Ս. Եկեղեցոյ հինգ Տաղաւար Տօներէն մէկն է: Յիսուս Քրիստոսի խաչելութենէն եւ մահէն յետոյ՝ երեկոյեան, բարեպաշտ մարդիկ Անոր մարմինը իջեցուցին խաչէն եւ դրին վիմափոր գերեզմանի մէջ՝ փակելով մեծ քարով: Երեք օր յետոյ՝ Կիրակի առաւօտեան, իւղաբեր կանայք՝ Մարիամ Մագդաղենացին, Յակոբի մայր Մարիամը եւ Սողոմէն, գացին գերեզման՝ անուշաբոյր իւղերով օծելու Քրիստոսի մարմինը, սակայն զարմանքով տեսան, որ քարայրի մուտքին քարը հեռացուած է, իսկ գերեզմանը՝ թափուր: Մինչ անոնք կը տարակուսէին, երեւցան երկու հրեշտակներ եւ ըսին. «Ինչո՞ւ ողջին մեռելներու մէջ կը փնտռէք: Այստեղ չէ, այլ Յարութիւն առաւ» (Ղուկ. 24:5-6):

Յարութեան լուրը կանայք անտեցին առաքելներուն, որմէ ետք Յիսուս երեւցաւ անոնց: Քրիստոսի Յարութիւնը դարձաւ Քրիստոնէական վարդապետութեան եւ հաւատքի հիմքը: Եթէ մեռելներու յարութիւն չկայ, ապա եւ Քրիստոս յարութիւն առած չէ: Եւ եթէ Քրիստոս Յարութիւն չէ առած, ի զուր է մեր քարոզչութիւնը, ի զուր է եւ ձեր հաւատքը» (Ա Կորնթ. 15:13-14):

Ս. Յարութեան տօնին նախընթաց երեկոյեան եկեղեցիներուն մէջ կը մատուցուի Ճրագալոյցի Ս. Պատարագ, որուն միջոցաւ կը սկսին զատկական տօնակատարութիւնները: Առաւօտեան եկեղեցիներուն մէջ կը կատարուի ժամերգութիւն, Անդաստանի արարողութիւն, ապա կը մատուցուի տօնական Ս. Պատարագ: Ս. Յարութեան տօնին հաւատացեալները իրար կ'ողջունեն «Քրիստոս Յարեաւ ի մեռելոց» անտիսով, կը պատասխանուի՝ «Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»:

Զատկուայ տօնին հաւատացեալները հաւկիթ կը ներկեն: Ներկուած հաւկիթը կը համարուի Յարութեան եւ նոր կեանքի խորհրդանիշ: Կարմիր գոյնը կը խորհրդանշէ խաչեալ Յիսուսի կենդանարար արիւնը, որ թափուեցաւ մարդկութեան փրկութեան համար: Ըստ Ս. Գրիգոր Տաթևացիին՝ «Միայն Զատիկին կը ներկենք, որովհետեւ հաւկիթը օրինակ է աշխարհին», եւ ինչպէս

իմաստունները կ'ըսեն. «Դուրսի կեղերը կը նմանի երկինքին, թաղանթը՝ օդին, սպիտակուցը՝ ջուրին, դեղնուցն ալ երկիրն է: Իսկ կարմիր գոյնը կը խորհրդանշէ Քրիստոսի արիւնը: Եւ մենք կարմիր հաւկիթը մեր ձեռքերուն մէջ առնելով՝ կը հռչակենք մեր փրկութիւնը»:

Յիսուս Քրիստոսի հրաշափառ Յարութեան տօնը Հայ Եկեղեցին կը նշէ յիսուն օր շարունակ՝ մինչեւ Հոգեգալստեան տօն (Պենտեկոստէ): Այս ընթացքը կը կոչուի Հինանց շրջան կամ Հինունք, որ ծագումն է «յիսունք» բառին:

Հինանց շրջանի քառասուն օրերը Յարուցեալ Քրիստոսի՝ աշակերտներուն երեւելու եւ Աստուծոյ արքայութեան մասին վկայութիւններ տալու յիշատակութիւնն են (Գործք 1:3), իսկ վերջին տասը օրերը նուիրուած են Քրիստոսի Համբարձման:

Հինանց շրջանը կ'աւարտի Հոգեգալստեան տօնով: Համբարձումէն տասը օր ետք, ըստ Քրիստոսի խոստումին, առաքեալներու վրայ իջաւ Աստուծոյ Ս. Հոգին, եւ զօրացած առաքեալները վկայեցին Քրիստոսին ամբողջ աշխարհով:

**ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ:  
ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ:**

## Holidays

April 10, 2020

### GOOD FRIDAY

Good Friday is the day of commemoration of Christ's tortures, Crucifixion, Death and Burial. The Service of the Crucifixion is conducted, following which, the Service of His Burial is held. It is during the Burial service that the symbolic Tomb of Christ, decorated with flowers and candles, is processed around the Church for the faithful to witness and participate.



Holy Saturday - April 11, 2020

**HOLY SATURDAY,**

**EVE OF FEAST OF THE GLORIOUS RESURRECTION  
OF OUR LORD JESUS CHRIST OR THE EASTER FEAST,  
CANDLELIGHT DIVINE LITURGY**

On Holy Saturday, Christ's destruction of hell and His liberation of righteous souls are commemorated. According to Church tradition, the new day begins following the Evening Service. An evening Divine Liturgy is celebrated, at the end of which the good tiding of the glorious resurrection of the Savior is proclaimed: "Christ is Risen from the dead; Blessed be the Resurrection of Christ!" The period of the Great Lent is thus concluded.

The feast of the Glorious Resurrection of Our Lord Jesus Christ or the Easter Feast starts on the eve and is continued after the midnight. On the eve a solemn Candlelight Divine Liturgy is celebrated and a solemn Divine Liturgy is celebrated. Following the conclusion of the Liturgy, the assembled faithful welcome each other on the occasion of the Glorious Resurrection of Christ conveying the great tiding: "Christ is Risen from the dead" and receive the answer: "Blessed is the Resurrection of Christ" and take lit candles home, symbolizing the Light that Christ brought into the world. The Divine Liturgy celebrated on the eve is the end of the Great lent and the start of the festive ceremonies.

**Sunday, April 12, 2020**

**FEAST OF THE GLORIOUS RESURRECTION OF JESUS CHRIST**

The Feast of the Glorious Resurrection of Our Lord Jesus Christ or the Easter Feast is one of the five major feasts of the Armenian Church. The main origin of the feast is the following.

The king of Egypt didn't agree to allow the Hebrews to travel into the desert to offer sacrifices to Lord the God, and the last punishment of God on the king of Egypt that should force the king to let the Hebrews out of the country was the death of every first-born son and every first-born of all cattle in Egypt. In order to save the Hebrews from that punishment the Lord spoke to Moses and by means of Moses ordered the Hebrews to kill a lamb and taking some of the blood and put it on the doorposts and above the doors of the houses. On the night

when He would go through the land of Egypt to kill every first-born male, both human and animal, He would see the blood on the doors and would not let the Angel of Death enter the house. He would pass over and wouldn't harm the Hebrews when punishing the Egyptians. Finally, after that punishment, the king allowed the Hebrews to leave the country, and the Hebrews left Egypt. So, mankind obtained life thanks to the Blood of Christ, the Lamb of God, in order to reach the Christians' blessed land - the Kingdom of Heaven.

The Mystery of Easter is the mystery of Jesus Christ, His Salutary Holy Blood shed for mankind and His Rising from the dead for mankind. The Son of God should incarnate, be subjected to tortures, be crucified, buried and the third day raise from death (Ps 15:9-11, 29:4, 40:11-13, 117:16-17, Ho 6:2-3).

Following the crucifixion and death of Jesus Christ His body was taken off the cross and placed into the tomb and the entrance to the tomb was closed by a large stone and the soldiers were ordered to control the entrance to the tomb. After three days the three women, who had followed Jesus from Galilee, Mary Magdalene, Mary, the Mother of James and Joseph, and the wife of Zebedee brought spices and perfumes to anoint the body of Jesus. They found the stone rolled away from the entrance to the tomb, so they went in but they didn't find the body of the Lord. They stood there puzzled about this, when suddenly two angels dressed in white appeared and said to them, "Why are you looking among the dead for one who is alive? He is not here, he has been raised" (Lk 24:5-6). The women returned from the tomb and told all these things to the eleven disciples and the rest. According to Peter more than 500 people saw Christ who had risen from the dead. So, this is the evangelical tiding of the fact of Easter or Holy Resurrection.

Resurrection of Christ became the basis of the Christian doctrine and faith. "If that is true, it means that Christ has been raised from death, then we have nothing to preach and you have nothing to believe" (1 Co 15:13-14).

Christ rose from the dead, by means of His Death He destroyed Death and granted eternal life. "I am the Resurrection and I am the Life. Whoever believes in me will live, even though he dies; and whoever lives and believes in me will never die" (Jn 11:25).

Christ died for the salvation of mankind and by His Blood took away the sin in the world, so that we should inherit eternal life.

On the day of the Easter feast people dye eggs red as a symbol of fruitful life, salvation and joy. St. Gregory of Datev considers the egg to be the symbol of the world, the shell of which is the sky, the membrane is the air, the white is the water and the yolk is the earth. Dyeing eggs red symbolizes the salvation of the world by means of Blood of Christ.

The Armenian Church celebrates the Easter Feast on the first Sunday following the full moon of the vernal equinox, with 35 days moveability, during the period from March 21 –April 26.

The Armenian Church traditionally celebrates evening Divine Liturgy on the evening prior to Jesus Christ's Glorious Resurrection (Easter). Following the conclusion of the Liturgy, the assembled faithful take lit candles home, symbolizing the Light that Christ brought into the world. The Divine Liturgy celebrated on the eve is the start of the festive ceremonies.

On Sunday, the day of the feast, a morning service is conducted the Andastan Service is performed wherein the four corners of the world are blessed, afterwards the Divine Liturgy is celebrated. That day the faithful welcome each other on the occasion of the Glorious Resurrection of Christ conveying the great tiding: "Christ is Risen from the dead" and receive the answer: "Blessed is the Resurrection of Christ."

Fifty-day period beginning from the Easter Feast – the Holy Feast of the Glorious Resurrection of Our Lord Jesus Christ - and lasting till Pentecost in the Holy Armenian Apostolic Church is called Hinounk or Hinants period. That period is dedicated to the mystery of Resurrection of the Lord, and that is why it is Dominical period.

The name "Hinounk" comes from the word hisuonk (fifty). The first forty days of the period are dedicated to the appearances of Rosen Christ: "For forty days after his death he appeared to them many times in ways that proved beyond doubt that he was alive. They saw him, and he talked with them about the Kingdom of God" (Ac 1:3).

The last ten days of the Hinants period are dedicated to the Ascension of Christ.

Hianats period is concluded with the Feast of Ascension. According to the Church laws there are no fasting days during all fifty days of Hinants period, which means that all people can eat everything during that period.

**Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ  
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ**

**ԱԻԱԳ ՈՒՐԲԱԹ, 10 ԱՊՐԻԼ 2020**

Կարգ Թաղման - Ժամը 6:00

**ՇԱԲԱԹ, 11 ԱՊՐԻԼ 2020 - ՃՐԱԳԱԼՈՅՑ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ**

Երեկոյեան Ժամերգութիւն եւ

Ս. Գրային ընթերցումներ - Ժամը 5:30

Ս. Պատարագ - Ժամը 6:00

**ԿԻՐԱԿԻ, 12 ԱՊՐԻԼ 2020 - Ս. ԶԱՏԻԿ**

Առաւօտեան Ժամերգութիւն - Ժամը 9:30

Ս. Պատարագ - Ժամը 10:30

Պատարագիչ՝

ԳԵՐՇ. Տ. ԱԲԳԱՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

Առաջնորդ Գանատահայոց Թեմի

**ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 13 ԱՊՐԻԼ 2020**

**ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ**

Հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոցն  
առաւօտեան Ժամը 11:00

Հոգեհանգիստ խնդրելու համար հեռաձայնել  
Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066 կամ արցանց  
պատուիրել մինչեւ Շաբաթ կէսօրէ ետք Ժամը 5:00:

**Աւագ շաբթուայ արարողութիւններէն պիտի սփռուին  
Հատուածներ [ուրիշ հեռարձակումով live](#) Եկեղեցւոյ  
դիմատարի էջով.-**



**Saint Gregory Armenian Apostolic Church**

**CALANDRIER DE PÂQUES**

**LES SERVICES SERONT DISPONIBLE  
DIRECTEMENT EN LIGNE**

**VENDREDI SAINT, 10 AVRIL 2020**

Services d'obsèques – 18h00

**SAMEDI SAINT, 11 AVRIL 2020**

Office du Soir et les lectures Biblique – 17h30

La Sainte Messe-18h00


**PÂQUES - DIMANCHE, 12 AVRIL 2020**




Office de matin – 9h30  
La Sainte Messe – 10h30  
La Messe sera célébrée par  
**S.E. ABGAR HOVAKIMYAN**  
Primat de Diocèse Arménienne du Canada

**LUNDI, 13 AVRIL 2020**

Office de requiem pour tous les défunts à 11h00

Pour votre demande office de requiem veuillez appelez  
bureau de l'église au (514) 279-3066 ou veuillez-nous contactez  
en ligne jusqu'à 5h00 

**Les cérémonies  
de la Semaine Sainte seront télédiffusés sur facebook  
Live:**

 **Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal**

**Ս. ԶԱՏԻՎԻ ԻՒՂԱԳԻՆ**

Գիտակցելով այս օրերուն դժուարութիւնը, Զատկուայ տօնին առիթով համեստօրէն կը խնդրենք մեր սիրալիր հաւատացեալներէն, կատարել իւղագինի սրտաբուխ նուիրատուութիւն ի նպաստ Ձեր Ս. Եկեղեցոյ առաքելութեան: Ձեր նուիրատուութիւնները կարելի է կատարել նաեւ՝ հետեւեալ միջոցներով՝



**EASTER OFFERING (YOUGHAKIN)**

On the occasion Easter and concerning the difficulties that we are facing to those days; we humbly ask our parishioners to remember St. Gregory the Illuminator Armenian Cathedral during this holiest of seasons. Your Easter offering is a sign of faith, your commitment to the Church, and thanksgiving to God.

Your donations can be made also by:




## ԾԱՂԻԿՆԵՐ

### ԱԻՍԳ ՇԱՐԹՈՒՄՑ ԵՒ ՍՈՒՐԲ ԶՍՏԿՈՒՄՑ

Այն հաւատացեալները, որոնք կը փափաքին ծաղիկներ նուիրել Ծաղկագարդի, Աւագ Ուրբաթի եւ Զատկուայ տօներուն առիթով, բարեհաճին հեռաձայնել եկեղեցւոյ գրասենեակ (514) 279-3066:

### FLOWERS FOR HOLY WEEK AND EASTER

Parishioners who wish to donate flowers for Palm Sunday, Good Friday, and Easter Sunday are asked to call the Church office (514) 279-3066.



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճար  
St. Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal  
ԱՐԱԳ ՈՒՐԲԱԹ

VENDREDI SAINT-  LIVE



ԱՐԱԳ ՈՒՐԲԱԹ, 10 ԱՊՐԻԼ 2020

Կարգ Թ-աղման - ժամը 6:00

Ուղիղ հեռարձակում հատուածներ Ս. Պատարագէն

VENDREDI SAINT, 10 AVRIL 2020

Services d'obsèques – 18h00

Extraits en direct de la Sainte Messe



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008  
[stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)



**ՄՈՆՏՐԵԱԻ Ա. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻՉ ԱՈՒԱՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ  
ՏԱՅՐ  
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CAHEDRAL OF  
MONTREAL**

**Ս. ԶԱՏԻԿ – EASTER**

**Կիրակի, 12 Ապրիլ 2020  
Sunday, April 12, 2020**

**Առաւօտեան ժամերգութիւն - Morning service - 9:30  
Ս. Պատարագ - Divine Liturgy-10:30 **Live****

**Պատարագիչ՝ - Celebrant**

**Գերշ. Տ. Արքար Եպս. Յովակիմեան  
Առաջնորդ Գանատահայոց Թեմի  
His Grace Bishop Abgar Hovakimyan  
Primate Armenian Diocese of Canada**


**Ուղիղ հեռարձակում – Live at 10:30**



**Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal**

615 Stuart Avenue, Outremont, QC  
H2V 3H2

Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008  
[stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)





ՀԱՅՑ. ԱՌԱՔ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINEUR

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

### ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

Միրելի հաւատացեալներ,  
հաճոյքով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,  
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել  
Bernard փողոցին վրայ գտնուող  
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի  
կայանատեղիին (parking) մէջ,  
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.ե. ժամը 3:



### PARKING

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard stret, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. all the way to the 'Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

Adress : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2